

ՍՏԵՓԱՆՈՍ ՄՅՈՒՆԵՑՈՒ ԵՎ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿԻ
ՄԵԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿՋԲՆԱՂՔՅՈՒՐԻ ՄԱՍԻՆ

Բաճասիր. գիտ դոկտոր Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

VIII դարի նշանավոր մատենագիր Ստեփանոս Սյունեցու պատրաստության, մանավանդ թարգմանական գործունեության մասին դրվատանքով է խոսվել տակավին միջնադարում¹։ Ինչպես նկատել ենք այլ առիթով², Ստեփանոս Սյունեցին ծանոթ է եղել «երեք մեծ կապադովկացիների» գործերի հայերեն թարգմանություններին և օգտվել է դրանցից։ Այս առումով առաջին հերթին հիշատակելի են Բարսեղ Կեսարացու «Պաճոց գրքի»³ այն նյութերը, որոնցում գերազանցապես դավանական խնդիրներ են արծարծվում։ Տվյալ պարագայում համեմատության հնարավորություն են ընձեռում «Հարցմունք և պատասխանիք»-ի և «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանությունները։ Ստ. Սյունեցին բավարարվում է մերթ հեղինակին՝ «երանելին Բարսեղ ասէ», երբեմն էլ բուն գործի խորագիրը հիշատակելով՝ «ասէ ընդդէմ Ապողինարի», «ասէ ի ճառի Մննդեանն»։ Ահա այսպիսի տեսք ունեն մեր ձեռքի տակ եղած ընդհանրության օրինակները։

1 Տե՛ս Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 130—135; Հմմտ. Մ. Գ. Գրիգորյան. Ստեփանոս Սիւնեցի. Պեյրութ—Լիբանան, 1958, էջ 29—36։

2 Տե՛ս Կ. Մ. Մուրադյան. Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ. Երեւան, 1983, էջ 148—149։

3 Հայոց թարգմանական մատենագրության երեւի գործերից է Բարսեղ Կեսարացու «Պաճոց գիրքը», որը ձեռագրերում, երբեմն էլ տպագիր գրականության մեջ, մերթ կոչվում է Վասն տաճոց, հաճախ էլ՝ պարզապես Պաճոց։ Այն բովանդակում է հեղինակի հիմնականում ճառական-մեկնողական գործերը (ոչ բոլոր), ինչպես նաև որոշ թղթեր և դավանական բնույթի հարցումներ (ընդհանուր առմամբ 33 բնագիր)։ «Սրբոյն Բարսղի ուղղափառի եւ Ապողինարի հերձուածողի Հարցմունք եւ պատասխանիք խորագիրը կրող աշխատանքի հեղինակային պատկանելության շուրջ հայագիտության մեջ ժամանակին կասկած է հայտնվել, ուստի Պաճոցի բովանդակությանն անդրադառնալիս հայագետները երբեմն հիշատակում են 32 անուն գործ։ Այսպես, օրինակ, Ն. Ակինյանը գրում է. «Պաճոց գիրք, որ 32 ճառն կը բաղկանայ, խոսված քառասորդաց պաճոց մեջ...» (տե՛ս նրա Մատենագրական հետազոտություններ. Հ. Ա. Վիեննա, 1922, էջ 64)։ Ժողովածուի կազմության ժամանակի ու հանգամանքների, նյութերի ընտրության ու դասդասման մասին որևէ ուղղակի հիշատակարան-հիշատակագրություն չի պահպանվել։ Ընթացիկում է, որ ժողովածուի խմբագրությունը 650—660 թվականին վերջը պետք է կատարված ըլլած։ Դավիթ Քորայրեցու հաղորդման համաձայն՝ Բարսեղը «Պաճոց գիրքը» ասաց յաւուրս աղուհացիցն» (Մաշտոցի անվ. Մատենագրարան, ձեռ. № 1879, էջ 242։ Այսուհետև կնշենք միայն ձեռագրի համարն ու էջը)։ Հասկանալի է, որ եթե ժողովածուի ոչ բոլոր նյութերը, ապա գոնե դրանց զգալի մասը մինչ այդ պետք է թարգմանված լիներ հայերենի, որպեսզի VII դարում այն խմբագրելու, ընդհանուր տեսքի բերելու խնդիր առաջանար։ Ճիշտ այնպես, ինչպես Գրիգոր Նազիանզացու շորս գիրք-ժողովածուների համար խորագրեր են սահմանվել ըստ համապատասխան առաջին ճառերի սկզբածքների, Բարսեղ Կեսարացու աշխատանքն էլ «Պաճոց գիրք» է կոչվել ըստ առաջադիր ոճադաս պաճոց ճառի։ Պահպանվել է միջնադարյան համապատասխան ձևակերպում այդ մասին. «Եւ բովանդակ գիրքս Պաճոց կոչի, զի սա գլուխ է, և կենդանին ի գլխոյն ճանաչի» (ձեռ. № 1480, էջ 242 ա)։

Պրոյն Բարսեղի ուղղափառի և Ապոլիեարի
ճեղճաձողի Հարցմունք և պատասխանիք
Ձեռ. № 3710 (Ժողովածու, XIII դար)

Ապոլիեար. ուրեմն երկու կատարեալք:

Ուղղափառ. երկուց գոյացութեանց կատարելոց
միատրութիւն:

Ապոլիեար. երկու կատարեալք մի կատարեալ
ոչ լինին:

Ուղղափառ. առ մարդկան արդեաւք անկարելի
լեալ, բայց Աստուծոյ կարելի:

Ապոլիեար. որպէս Կուսին ծնանելն, որպէս ի

Վերայ ծովուն գնալն, որպէս դրաքն փա-
կելովք մարմինն թանձրամասն մտանել,
ի մարմնոյ և յոսկերաց հաստատեալ:
Արդ՝ զոր արինակ ալսք, կարելիք և
այնք (էջ 369բ—370 ա):

Ի ծնունդն Փրկչին

Ձեռ. № 322 (Պահոց գիրք, 1285 թ.)

Աստուած ի մարմնում, ոչ առուածոյ գործովք,
որպէս ի ձեռն մարգարէիցն, այլ բուսակից ին-
քեան և միատրեալ ներկայացուցանելով զմար-
դըն, և ի ձեռն ազգակցին մերոյ՝ մարմնոյն
խորոյ՝ ի վեր առ ինքն տանելով զամենայն
մարդկութիւնս: Արդ՝ զիա՞րդ, ասէ, ի ձեռն
միոյ յամենեւեան եկն վնասակարն: Եւ զի՞նչ
արինակ ի մարմնում աստուածութիւնն՝ որպէս
հոյր յերկաթում ոչ փոխարկարար, այլ փո-
խարարար: Քանզի ոչ եթէ արտաքին ինչ յիւր-
մէն ընթանայ հոյր առ երկաթ, այլ մնալով
յըստ բնութեան տեղով՝ փոխարտէ ի նա յիւր-
մէ՛ զարուստեմէն, որ ոչ նուազէ փոխարտու-
թեամբն, և զբոլորն լնու ընդունող: Ըստ այսմ
եւ աստուածային բան ոչ շարժի յիւրմէ, և
բնականաց ի մեզ: Եւ ոչ յեղումն կրեաց (էջ
145բ): Եւ բանն մարմին եղեւ... Եւ զիա՞րդ,
ասեն, ի մարմնական տկարութենէն ոչ լցաւ
Աստուած բանն: Ասեմք՝ թէ եւ ոչ հոյր ի յառ-
կութեանցն երկաթոյ առնու ինչ: Սեաւ է երկաթ
ի ցուրտ, բայց սակայն հրացեալ զ՞րոյն կեր-
պարանս զգնու, և ինքն պայծառանալով ոչ
սեւացուցանէ զհոյրն, և ցրտանալով ոչ ցըր-
տացուցանէ զբոցն: Այսպէս և մարմինն հա-
ղորդելով աստուածութեանն՝ ոչ փոխարեաց ի
նա զիւր տկարութիւնն: Քանզի. եւ ո՞չ ստեղ-
ծականիս այսմ հոյր հանգիտարար տացես ազ-
դել աստուածութեանն... (էջ 146ա):

Սանփանեոսի Սինեոց եպիսկոպոսի
և ուղղափառ վարդապետի հակաճառութիւն...
Ձեռ. № 1555 (Ժողովածու, 1397 թ.)

Դարձեալ ասէ ընդդէմ Ապոլիեարի (էջ 304ա)
վասն միութեան, քանզի ասէր երկու կատա-
րեալս ի մարմնի: Սուրբ ասէ՝ եթէ երկուց
գոյացութեանցն կատարելոց միատրութիւն:
Ապոլիեար ասէ՝ եթէ երկու կատարեալ մի կա-
տարեալ կենդանի լինել ոչ կարէ:

Սուրբ ասէ՝ մարդկան անկարելի է, այլ Աս-
տուծոյ ամենայն ինչ կարելի գոյ: Որպէս ի
Կուսէ ծնանելն և ի վերայ ծովուն գնալն, որ-
պէս դոքն փակելովք, մարմինն թանձրամած
մտանելով ի մարմնոյ և յոսկերաց հաստատեալ:
Այլ զոր օրինակ այս կարելի է Աստուծոյ,
նոյնպէս և այն. քանզի Աստուծոյ և աստուա-
ծային է ամանն (էջ 304 բ):

Դարձեալ ասէ ի ճառի ծննդեանն (էջ 304բ),
Աստուած ի մարմնում ոչ առուածոյ գործովք
որպէս ի ձեռն մարգարէիցն, այլ բուսակից
ինքեան և միատրեալ ներկայացուցանելով
զմարդն և զի՞նչ օրինակ (էջ 304 բ) ի մարմ-
նում աստուածութեանն որպէս հոյր յերկաթում
ո՞չ փոխարկարար, այլ փոխարարար: Քան-
զի ոչ եթէ արտաքին ինչ յիւրմէ ընթանայ, հոյր
առ երկաթ, այլ մնալով ըստ բնութեան տե-
ղով՝ փոխարտել ի նա յիւրմէ՛ զարուստեմէն, որ
ոչ նուազէ փոխարտութեամբ և զբոլորն լնու
ընդունող: Ըստ այսմ և աստուածային բանն ոչ
շարժեալ յիւրմէ և բնականաց ի մեզ: Եւ ոչ յե-
ղումն ինչ կրեաց, և բանն մարմին եղև: Եւ
զիա՞րդ, ասեն, ի մարմնական տկարութենէն ոչ
լցաւ Աստուած բան: Ասեմք և թէ և ոչ հոյր
յերկաթոյ առնու ինչ: Սեաւ և երկաթ և ցուրտ,
բայց սակայն հրացեալ զհոյր կերպարանս զգն-
նու և ինքն պայծառանալով ոչ սեւացուցանէ
զհոյր (էջ 305ա), քանզի և ոչ ստեղծականի
այսմ հոյր հանգիտարար տացես ազդել աս-
տուածութեանն (էջ 305բ):

Համեմատութեան նպատակով վկայակոչված Ստեփանոս Սյունեցու թղթում
վարելի է ցույց տալ «Պահոց գրքի» հետ ունեցած առնչակցութեան այլ օրի-
նակներ ևս, մանավանդ Հարցումի էջերում եղած այդ կարգի հատվածների
հայտնաբերումը էական դժվարություն չի ներկայացնում: Սակայն համադրվող

երկու դրվագներն էլ, ինչպես տեսնում ենք, բավական ընդարձակ քաղումներ են, դավանական որոշակի հարցադրման են պատասխանում և բառ առ բառ համընթաց են սկզբնաղբյուրի հետ: Սույն համադրությամբ պարզ է դառնում, որ Հարցումից քաղված հատվածի առաջին կեսը նույնությամբ կա Մովսես Խորենացու⁴ և Հովհան Օձնեցու⁵ ընդհանրության օրինակներում, իսկ նույն դրվագի երկրորդ կեսը (որպես կուսին ծեանել...) հետագա քննությամբ կը պարզվի, որ վկայակոչվել է նաև Ստեփանոս Ասողիկի կողմից: Միաժամանակ պիտի նկատել, որ հայ մատենագիրների քաղումներում եղած նույնական օրինակների հիմքը «Պահոց գրքի» հայերեն թարգմանությունն է:

Վերոբերյալ համեմատություններից պարզորոշ երևում է, որ Ստեփանոս Սյունեցին առանց էական միջամտության հետևում է սկզբնաղբյուրին, վերջինիս աչա կամ այն դրվագը փոխանցում իր շարադրանքի մեջ: Ասվածը տվյալ դեպքում վերաբերում է հատկապես Հարցումից կատարված քաղումին: «Ի ծնունդն Փրկչին» ճառի հետ Սյունեցու թղթի առնչակցությունը նույնպես բառացի է, սակայն, ի տարբերություն նախորդ ընդհանրության, լրացուցիչ բացատրության հնարավորություն է ընձեռում: Նախ՝ համեմատությունից պարզ երևում է, որ Սյունեցին որոշ խմբագրական աշխատանք է կատարել. կրճատել, դուրս է թողել սկզբնաղբյուրի երկու փոքր հատված՝ առանց խաթարելու Բարսեղ Կեսարացու բուն ասելիքը: Սյունեցու թղթի ընդօրինակությունների համեմատությունից պարզվում է, որ այն ժամանակին, հավանաբար գրիչների ձեռքով, որոշ փոփոխություններ է կրել: Մինչդեռ Կեսարացու ճառի հայերեն թարգմանության ձեռագրերը և բնագիրը հնարավորություն են տալիս սրբագրելու Սյունեցու թղթի ենթադրվող աղավաղումները: Այսպես, օրինակ, Բարսեղ Կեսարացու ճառի «ի մարմնում աստուածութիւնն» կապակցության դիմաց, որը միակն է պահպանված ընդօրինակություններում, Ստեփանոս Սյունեցու թղթում ունենք «ի մարմնում աստուածութեանն»: Բուն հատվածի ուղղորդ քննությունը ցույց է տալիս, որ ընդգծված բառաձևի երկրորդ կիրառությունը ճիշտ չէ, և որ այն պիտի սրբագրվի Բարսեղ Կեսարացու ճառի հայերեն թարգմանության օրինակով: Ասվածը հաստատվում է նաև բյուզանդական մատենագրի հունարեն նախօրինակով, ուր վկայակոչված արտահայտության դիմաց ունենք՝ «ἐν σαρκὶ ἢ θεότητι»⁶, որի համապատասխանությունն է հայերեն թարգմանությունը (θεότης — «божественность»): Ուստի սկզբնաղբյուրի բնագրի և թարգմանության հետևությամբ Ստեփանոս Սյունեցու թղթում ևս պիտի ընթերցել աստուածութիւնն: Ծիշտ նույն եղանակով ու համապատասխան հիմնավորմամբ Սյունեցու թղթի արտաքին պիտի վերընթերցել արտաքին, տեղոջ-ը՝ տեղոջ, շարժեալ-ը՝ շարժի, յեղումն ինչ-ը՝ յեղումն և այլն⁸:

Սակայն վերոբերյալ համադրվող հատվածների ավարտամասում կա մի միտք, որին անհրաժեշտ է մի փոքր ավելի հանգամանորեն անդրադառնալ:

Բարսեղ Կեսարացի

Ստեփանոս Սյունեցի

Ասեմք՝ թէ և ոչ հուր ի յառկութեանցն երկաթոյ առնու ինչ: Սեաւ է երկաթ եւ ցուրտ...

Ասեմք, և թէ և ոչ հուր յերկաթոյ առնու ինչ: Սեաւ և երկաթ եւ ցուրտ...

⁴ Հմմտ. Երանելի մեծի քերականության Մովսէսի Խորենացի եպիսկոպոսի (տե՛ս Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901, էջ 25—26):

⁵ Հմմտ. Յոհաննու Իմաստասիրի Աւանցւոյ Մատենագրութիւնք. Վենետիկ, 1953, էջ 68—69: Խորենացու և Օձնեցու «Պահոց գրքի» հետ ունեցած առնչակցությանն անդրադարձել ենք առանձին քննությամբ:

⁶ Patrologiae cursus completus. Series graeca. T.31, p.1460 (այսուհետե՛ւ՝ PG);

⁷ Древнереческо-русский словарь. Т. I, М., 1958, с. 778 (այսուհետե՛ւ՝ ДРС).

⁸ Առաջադիվող սրբագրությունների հունարեն համապատասխանությունները տե՛ս PG, t. 31, p. 1460—1461:

Հունարենը. «Φαμέν, ὡς οὐδὲ τὸ πῦρ τῶν τοῦ σιῶγρου ἰδιωμάτων μεταλαμβάνει. Μείας ὁ σιῶγρος καὶ ψυχρὸς...»⁹:

Նախ պիտի նկատել, որ Կեսարացու միտքը հիմնականում այս նույն տեսքով է պահպանվել բոլոր ձեռագրական ընդօրինակություններում: Բացի այդ այն համընթաց է հունարեն նախօրինակի հետ, ուստի նույնի հետքերին անդրադառնալիս ելակետը բյուզանդական մատենագրի ճառի հայերեն թարգմանության և բնագրի համընթացությունը պիտի լինի:

Սյունեցու քաղվածքում «ասեմք և թէ» կապակցության և-ը գրչական պատահական սխալի արդյունք է: Դրանում կարելի է համոզվել նույնիսկ առանց այլադրյուր օրինակի: Սյունեցու համապատասխան հատվածն ինքնին այդ հնարավորությունը տալիս է: Այդուհանդերձ՝ ավելորդ չէ նկատել, որ հիշյալ շաղկապի ընդմիջարկություն լինելը միաժամանակ հաստատվում է սկզբնաղբյուրի և՛ բնագրով, և՛ թարգմանությամբ: Ասվածից հետևում է, թե նշված արտահայտությունը Կեսարացու ճառի հետևությունը պիտի ընթերցել «ասեմք, թէ և ոչ» ավանդված տեսքով: Բյուզանդական մատենագրի ճառի շարունակությունն «հուր ի յատկութեանցն երկաթոյ առնու ինչ» միտքը որևէ միջամատությունն անհրաժեշտություն չունի: Մինչդեռ Սյունեցու հատվածում ինչ-ինչ պատճառով օտարվել է «ի յատկութեանցն» անհրաժեշտ մասնավորեցումը և այդ իսկ պատճառով միտքը աղավաղվել է, և ասելիքը դարձել է թերի: Մի բան պարզ է, որ կատարվածը խմբագրական միջամտության հետ որևէ առնչություն չունի: Սակայն Սյունեցու անխաթար պահպանված սկզբնաղբյուրը հնարավորություն է տալիս «ի յատկութեանցն» (բնագրի՝ τῶν... ἰδιωμάτων: ἰδιωμα—особенность, своеобразіе¹⁰) արտահայտությունը վերականգնել նաև քննվող թղթում և ընդհանուր կապակցությունը Բարսեղ Կեսարացու ճառի հայերեն թարգմանության նմանությամբ կարգալ՝ «հուր ի յատկութեանցն երկաթոյ առնու ինչ»:

Վերջին արբազրությունը վերաբերում է Ստեփանոս Սյունեցու «սեաւ և երկաթ և ցուրտ...» կապակցությանը, ուր դժվար չէ նկատել, որ առաջին և-ը անհրաժեշտ է, թերևս որի պատճառով էլ չկա ստորոգում, ուրեմն և ասելիքը մնում է անհասկանալի: Մինչդեռ Կեսարացու ճառի «սեաւ է երկաթ» ձևակերպումը պարզորոշ հուշում է նման ընթերցում նաև Սյունեցու թղթում, մասնավորապես որ հունարենում էլ ունենք μείας ὁ σιῶγρος¹¹. Ճիշտ նույն մասնավորեցումը: Հնարավոր է ենթադրել, որ գործ ունենք է> և գրչական պատահական շփոթի հետ, այլապես առանց սկզբնաղբյուրների վկայության էլ դժվար չէ նկատել, որ, ինչպես ասվեց, Սյունեցու թղթում նույնպես պահանջվում է «սեաւ է երկաթ» հասկանալի ընթերցումը:

Ստեփանոս Ասողիկի Պատմության և «Պահոց գրքի» առնչակցության իրողությունը, առանց որևէ քննության փորձի, առաջին անգամ արձանագրվել է Պ. Տեր-Պողոսյանի կողմից¹²: Համեմատությունը ցույց է տալիս, որ Ասողիկը հիրավի ծանոթ է եղել «Պահոց գրքին», ձեռքի տակ ունեցել է «Ի ծնունդ Փրկչին» ճառի, ինչպես նաև «Հարցմունք և պատասխանք» երկի հայերեն թարգմանությունները և օգտվել է դրանցից: Ահա այսպիսի տեսք ունեն մեր բացահայտած նմանության օրինակները:

⁹ Նույն տեղում, էջ 1461:

¹⁰ ДРС. I, 811.

¹¹ PG, t. 31, p. 1461.

¹² Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1969, № 6—7, էջ 290—291:

Ի ծնունդ փրկչին

Հետ. № 822 (Պահոց դիրք, 1285 թ.)

Աստուած ի մարմնում, ո՛չ առաջին գործովք, որպէս ի ձեռն մարգարէիցն, այլ բուսակից ինքնան է միաւորեալ ներկայացուցանելով զմարդըն է ի ձեռն ազգակցին մերոյ՝ մարմնոյն իւրոյ, ի վեր առ ինքն տանելով զամենայն մարդկութիւնս: Արդ՝ զիա՞րդ ասէ, ի ձեռն միոյ յամենակեան Լկն վնասակարն: Եւ զի՞նչ արինակ ի մարմնում աստուածութիւնն՝ որպէս հուր յերկաթում, ոչ փոխարկարար, այլ փոխարարար: Քանզի ոչ Լթէ արտաքոյ ինչ յիւրմէն ընթանայ հուր առ երկաթ, այլ մնալով լըստ բրնձեղանն տեղւոյ փոխարարէ ի նա յիւրմէ զաւրութիւնն, որ ոչ նուազէ փոխարարութեամբն, եւ զբոլորն լնու ընդունող: Ըստ այսմ և աստուածայինն բան ոչ շարժի յիւրմէ, եւ բնականաց ի մեզ: Եւ ոչ յեղումն կրեաց (էջ 145ր), «եւ լանն մարմինն եղև»¹⁴... եւ զիա՞րդ, ասեն, ի մարմնական տկարութենէն ոչ լցաւ Աստուած բանն, Ասեմք՝ քէ եւ ոչ եւր ի յառաջանցն երկաթոյ առնու ինչ: Սեաւ է երկաթ եւ ցուրտ, բայց սակայն հրացեալ՝ զհրոյն կերպարանս զգենու, եւ ինքն պայծառանալով ոչ սեւացուցանէ զհուրն, եւ ցրտանալով ոչ ցրտացուցանէ զբոցն: Այսպիս եւ մարմինն հաղորդելով աստուածութեանն՝ ոչ փոխարարեաց ի նա զիւր տկարութիւնն: Քանզի եւ ո՛չ ստեղծականիս այսմ հրոյ հանգիտարար տացես ազդել աստուածութեանն... (էջ 146ա):

Մերոյն Բարսեղ ուղղափառի եւ Ապողիեարի ներծածողի Հարցմունքի եւ պատասխանի
Հետ. № 3710 (Ժողովածու, ԺԳ դ.)

Ուղղափառ. երկուց զոյացութեանց կատարելոց միատրութիւն:

Ապողիեար. երկու կառարեալք մի կառարեալ ոչ լինին:

Ուղղափառ. առ մարդկան արդեալք անկարելի լիալ, բայց Աստուծոյ կարելի:

Ապողիեար. զիա՞րդ կարելի:

Ուղղափառ. որպէս Կուսէն ծնանելն, որպէս ի վերայ ծովուն զնալն, որպէս դաւաճ փակելովք մարմինն քանձրամասն մտանել, ի մարմնոյ եւ յոսկերաց հաստատեալ: Արդ՝ զոր արինակ այսք, կարելիք եւ այնք (էջ 369բ—370ա):

Սանփանոսի Տարոնեցոյ Ասողիան
Պատմութիւն անգղեւական,
Պետերբուրգ, 1885

Եւ սուրբն Բարսեղ ի ճառի Մենդեանն Քրիստոսի ասէ. «Աստուած ի մարմնում ո՛չ առաջին գործովք, որպէս ի ձեռն մարգարէից, այլ բուսակից ինքնան է միաւորեալ ներկայացուցանելով զմարդն: Եւ զի՞նչ օրինակ ի մարմնումն աստուածութեանն¹³—որպէս հուր յերկաթում, ոչ փոխարկարար այլ փոխարարար. քանզի ոչ էթէ արտաքս ինչ յիւրմէ ընթանայ հուր առ երկաթ, այլ մնալով ըստ բնութեանն ի տեղւոյ՝ փոխարարէ ի նա յիւրմէ զօրութենէն, որ ոչ նուազ է փոխարարութեամբ, և զբոլորն լնու զընդունողն: Ըստ այսմ և աստուածայինն բանն ոչ շարժի յիւրմէ և բնականաց ի մեզ, և ոչ յեղումն ինչ կրեաց, և բանն մարմինն եղև: Եւ զիա՞րդ, ասեն, ի մարմնական տկարութենէն ոչ լցաւ Աստուածն Բան. ասեմք՝ եթէ ոչ հուրն ի յառաջանցն երկաթոյն առնու ինչ. սեաւ է երկաթ և ցուրտ. բայց սակայն հրացեալ՝ զհրոյն կերպարան զգենու. և ինքն պայծառանալով՝ ոչ սեւացուցանէ զհուր. քանզի և ոչ ստեղծականիս այսմ հրոյ հանգիտարար տացես ազդել Աստուածութեանն» (էջ 212):

Եւ դարձեալ Ապողիսարէս՝ եթէ «երկու կառարեալ ի մի կառարեալ կենդանի լինել ոչ կարէ»: Եւ դարձեալ սուրբն Բարսեղ՝ «Ի մարդկանէ անկարելի, իսկ առ ի Աստուծոյ կարելի. որպէս ի Կուսէն ծնանելն, և ի վերայ ծովուն զնալն, որպէս դաւաճ փակելովք մարմինն քանձրամասն, հաստատեալ ի մտոյ և յոսկերաց՝ մտանելն: Արդ՝ զոր օրինակ այս կարելի է Աստուծոյ՝ նոյնպէս եւ այն. քանզի Աստուծոյ է և աստուածային է ամենայն բնութիւն և կիրք և ներգործութիւն և կամք» (էջ 214—215):

13 Բարսեղ Կեսարացի-Ստեփանոս Սյունեցի ընդհանրութեան քննութեան առիթով աստուածութիւնն հիմքի վրա առաջադրված սրբազրութիւնը հավասարապէս վերաբերում է նաեւ Ասողիկի համապատասխան աստուածութեանն ընթերցմանը:

14 Զովհ. Ա, 14:

Ստեփանոս Սյունեցու առիթով նկատեցինք, որ Հարցումից կատարած նրա իսկ քաղումի՝ «Երպէս Կուսին ծնեալն...» սկսվածքով հատվածը նույնա- նում է Ասողիկի համապատասխան քաղվածքի հետ: Ասվածին պիտի ավե- լացնել, որ Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմա- նությունից կատարած Ստեփանոս Սյունեցու և Ստեփանոս Ասողիկի ոչ միայն ընտրած հատվածն է նույնը, այլև նմանության կետերն էլ ճշգրիտ եղանա- կով կրկնվում են. երկու դեպքում էլ դուրս են թողնվել բյուզանդական մատե- նագրի ճառի ճիշտ նույն հատվածները: Առաջին հայացքից այն տպավորու- թյունն է ստացվում, որ Ասողիկը օգտվում է ոչ թե բուն սկզբնաղբյուրից, այլ՝ Սյունեցու համապատասխան օրինակից: Բայց դա իրականում այդպես չէ: Միանգամայն տեղին է նկատել, որ «Պահոց գրքից» հայ մատենագիրների կատարած փոխառությունների կրկնվող օրինակները ծագում են ոչ թե մի- մյանցից, այլ ընդհանուր սկզբնաղբյուրից: Ասվածը հաստատող տարբեր բը- նույթի օրինակներ կարելի է վկայակոչել: Ահա դրանցից մեկը. Ստեփանոս Սյունեցուց օգտվելու դեպքում երկու մատենագիրների օրինակներում էլ (Սյունեցի—Ասողիկ) վրիպում—անճշտությունների նույն ցանկը պիտի ունե- նայինք, մինչդեռ դրանք բոլորովին տարբեր են: Համադրենք մի ոչ մեծ հատված.

Բարսեղ Կեսարացի ի ծնունդ Փրկչին	Ստեփանոս Սյունեցի Հակաճառութիւն	Ստեփանոս Ասողիկ Պատմութիւն
Ասեմք՝ թէ եւ ոչ հուր ի յառկութեանցն երկաթոյ առնու ինչ (էջ 146ա):	Ասեմք, և թէ և ոչ հուր յեր- կաթոյ առնու ինչ (էջ 305բ):	Ասեմ՝ եթէ ոչ հուրն ի յառկութեանցն երկաթոյ առ- նու ինչ (էջ 212):

Համեմատության նպատակով առաջադրված օրինակից դժվար չէ նը- կատել, որ Սյունեցու և Ասողիկի հատվածները Բարսեղ Կեսարացու ճառի հետ կապող իրենց ուրույն ճանապարհն ունեն, ուստի և Ստեփանոս Սյունե- ցու «Հակաճառութիւնը...» չէ Ասողիկի Պատմության սկզբնաղբյուրը, այլ նշված հայ մատենագիրները միմյանցից բոլորովին անկախ օգտվում են միև- նույն թարգմանական սկզբնաղբյուրից:

Այժմ մի քանի խոսք «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանու- թյան օգնութեամբ Ասողիկի Պատմության համար առաջադրվող մեր սրբա- գրությունների մասին: Նոր Հայկազյան բառարանագիրները առած և առուած բառերի բացատրության առիթով երկու դեպքում էլ վկայակոչում են Բարսեղ Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» ճառի համադրության նպատակով վերևում բերված հատվածի սկզբնամասը, որը պահպանվել է Ասողիկի Պատմության համապատասխան դրվագում:

ա) «Աստուած ի մարմնում, ո՛չ առածոյ գործովք՝ որպէս ի ձեռն մար- գարէիցն, այլ բուսակից ինքեան և զմիաւորեալն կացուցանելով մարմին»¹⁵:

բ) «Աստուած ի մարմնում ո՛չ առածոյ (կամ առածոյ) գործովք, որ- պէս ի ձեռն մարգարէիցն, այլ՝ բուսակից ինքեան և միաւորեալ ներկայացու- ցանելով զմարդն»¹⁶:

Ասողիկի Պատմության բնագրի հրատարակիչ Ստ. Մալխասյանցը և ռու- սերեն թարգմանող Մ. էմինը տեղյակ են, որ Ասողիկի սկզբնաղբյուրը Բար- սեղ Կեսարացու հիշյալ ճառի հայերեն թարգմանութիւնն է (բնագիրը այդ հնարավորութիւնը տալիս է) և որ, ըստ Մ. էմինի, այն անհասկանալի է: «Աստուած ի մարմնում...» սկսվածքով հատվածի կապակցութեամբ Մ. էմի- նը գրել է. «За этими словами следует место совершенно непонятное,

¹⁵ ՆՀԲ. Ա., 282 (ընդգծումը մերն է):

¹⁶ ՆՀԲ. Ա., 312 (ընդգծումը մերն է):

«...στορε με οπυστηλ»¹⁷: Հենց սկզբից նկատենք, որ մեր ձեռքի տակ եղած Պաճոցի գրչագրերը պահպանել են բառարանագիրների վկայած երկրորդ օրինակը: Սյուն՝ առաջին վկայությունը մեղ անծանոթ գրչական տարբերակ է: Առկա օրինակներում երկու քննարկելիք կա. ա) առուած-առած ընթեր-
յումների հարցը, բ) միութեալ ներկայացուցանելով զմարդն և զմիաւորեալն կացուցանելով մարմին կապակցությունների փոխհարաբերության խնդիրը: Առուած-առած բառերին անդրադառնալիս պիտի նկատել, որ «ոչ առուածոյ» արտահայտության դիմաց հունարենում ունենք՝ «οὐκ ἐκ ἀναιµατόων»¹⁸, ուր «ἀναιµα-» ունի ընդհատություն, միջոց, ամրաժություն, ընդմիջում նշանա-
կությունները¹⁹: Վերոբերյալ հատվածի համար շատ ավելի ընտանի են ա-
ռուած բառի նշված իմաստները, քան առած տարբերակի նշանակու-
թյուններից որևէ մեկը, թեև հիշյալ երկրորդ օրինակում բառարանագիրները
տվյալ կիրառության համար այդ ընթերցումները մի պահ նույնացնում են:
Ասվածից հետևում է, թե Ասողիկի Պատմության «ոչ առուածոյ»-ը նույնպես
պիտի վերընթերցել «ոչ առուածոյ»²⁰: Ինչ վերաբերում է հիշյալ կապակցու-
թյունների տարբերությանը, ապա, ինչպես ասվեց, ձեռագրական այլ տար-
բերակ չի պահպանվել և կրկին պիտի առաջնորդվել բյուզանդական մատենա-
գրի ճառի բնագրի ու թարգմանության փոխհարաբերությամբ: Խնդրո առար-
կա «միաւորեալ ներկայացուցանելով զմարդն» կապակցության դիմաց հու-
նարեն՝ նախօրինակում ունենք «συμφυτὶ ἐναύτω τῶν ἀνδροπότῃτα»²¹, ուր
խոսքը մարդկային էությունը ներկայացնելու մասին է և ոչ թե մարմինը կա-
ցուցանելու: Այս իրողությունն էլ հիմք է տալիս մտածելու, որ «զմիաւորեալն
կացուցանելով մարմին» տարբերակը վկայակոչելիս բառարանագիրները հա-
վանաբար ընտրության-համեմատության հնարավորություն չեն ունեցել: Ուս-
տի և Բարսեղ Կեսարացու ճառի հայերեն թարգմանությունում և նրա ազդեցու-
թյամբ Ասողիկի Պատմության համապատասխան հատվածում «միաւորեալ
ներկայացուցանելով զմարդն» կապակցությունը բնագրային հիմնավորում
ունի և պատահական չէ, որ այն ավելորդ չի նկատվել ակադ. Ստ. Մալխաս-
յանցի կողմից: Ասվածից հետևում է, թե նշված արտահայտությունը պիտի
վերականգնվի նաև Ասողիկի Պատմության ռուսերեն թարգմանությունում:

Այսպիսով, վերոշարադրյալը հնարավորություն է տալիս կատարելու ո-
րոշ ընդհանրացումներ.

Ստեփանոս Սյունեցին և Ստեփանոս Ասողիկը դավանական խնդիրներ
արծարծելիս միմյանցից բոլորովին անկախ հաճախ ընտրել են «Պահոց
գրքի» հայերեն թարգմանության նույն հատվածները:

Հայ մատենագիրների քաղումները, հատկապես բառացի նմանության
օրինակները, սոսկ մեխանիկական վերաբնակեցումներ չեն, այլ սերտորեն
միահյուսված են ընկալող մատենագրական հուշարձանների բուն շարադ-
րանքի հետ:

«Պահոց գրքի» հետքերը առաջին հերթին դիտելի են իբրև հայ մատե-
նագիրների աշխարհայացքի բնորոշ դրսևորումներ: Ընկալող գրական եր-
կերից դժվար չէ նկատել, որ քաղումները պայմանավորված են առաջին

¹⁷ Всеобщая История Степаноса Таронского Асохника, переведена с армянского и
объяснена Н. Эмным. М., 1864, с. 150, прим. 24, հմմտ. «Զատուածդ զայդ, սկսեալ ի
բառիս «Աստուած ի մարմնում»՝ ամենեին արտաքս ընկենու ի թարգմանութենէն Մ. էմին,
քանի, առ, թէ ոչ կարաց ամենեին վերահասու դոլ իմաստի նորին» (տե՛ս Ստեփանոս
Ասողիկ. Գատություն տիեզերական, էջ 383, ծան. 118):

¹⁸ PG, t. 31, p. 1460.

¹⁹ ДРС, 1, с. 375.

²⁰ Ճիշտ նույն հիմքի վրա Ասողիկի Պատմության ի նմա-ն պիտի ընթերցել ի նա, ոչ
ցուազ է կապակցությունը՝ ոչ նուազէ (οὐτε ἐλαττωται, PG, t. 31, p. 1460) և այլն:

²¹ PG, t. 31, p. 1460.

հերթին անդական հոգևոր-եկեղեցական խնդիրներին համապատասխան պատասխան-լուծում առաջագրելու անհրաժեշտությունը:

Համեմատության եղանակով առաջին անգամ շրջանառության մեջ տրվող հատվածները դուռն աղբյուրագիտական նշանակությունը հիրավի կարևոր է, մանավանդ որ համագրվող գործերը կա՛մ անախ բն, կա՛մ էլ մեկ-երկու ձեռագրի հիման վրա կապարված հրապարակություններ են: Առաջարկվող համագրությունները հաճախ ընագրերի վիճակը փոխադարձ հսկելու, երբեմն էլ արագրելու հնարավորություն են տալիս:

ОБ ОДНОМ ОБЩЕМ ПЕРВОИСТОЧНИКЕ СТЕПАНОСА СЮНЕЦИ И СТЕПАНОСА АСОХИКА

Доктор филол. наук К. М. МУРАДЯН

Р е з ю м е

Древнейшие армянские переводы, являясь непосредственным первоисточником формирования армянской литературы, имеют большое значение для раскрытия идейной целенаправленности самостоятельных армянских литературных памятников, оценки мировоззрения книжников-переводчиков. Очевидна значимость переводной литературы и в сугубо источниковедческо-текстологическом аспекте. Исследование показывает, что Степанос Сюнеци и Степанос Асохик, независимо друг от друга, часто пользуются одинаковыми отрывками армянского перевода «Книги поста». Заимствования носят дословный характер, идентичны переводам и делают возможными текстологические уточнения обоих авторов одновременно, что следует иметь в виду при подготовке научного издания трудов Степаноса Сюнеци и Степаноса Асохика.